

ՊԱՏԱՆԱԿ
Տարեկան գին և Պոլսոյ հար 8 ՄԷԸ
Չաւառաց 40 ՄԷԸ
Վարձարանայ և Պոլսոյ 4 ՄԷԸ
Չաւառաց 3 ՄԷԸ
Եւրոպայի թերթի գին 60 փրյ
Կանոնական տողը մէկ անգամի հաւ
ժար 3 զուրուշ, երկու անգամի հաւ
ժար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար գումար աւելարկութիւն կը լինայ:



ՊԱՏԱՆԱԿ
Կուրս գացած լրագրաց ճանրու
ձախըը թմբագրութեան վրայ և
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն թմբագր
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո
լիս. Չինիլի խան, Մատիսի գրասեն
տակը
Տարու ձախըը չվճարուած 3-
յակ չգնդուներու

Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅՈՒՆ 20 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 28 մայիս.

Պ. Լապլէն սահմանադրական յանձնաժողովը նախադաշնութեան պաշտօնական ժամանակ յորդորեց իւր պաշտօնական կեանքին որ անկեղծարար ազգային կառավարութեան շուրջը խմբուին, որ արիւն և արդարաւոր զօրական մ'ունին իւր գլուխը և անկախի նախարարներ օրը խաղաղութեան և ներդաշնակութեան հը փախաբին անկեղծարար:

Պէրլին 28 մայիս.

Կառավարութեան կուսակցից թերթեւրը դո՛ւ աջօր կը նկատեն Շվեյտի թագաւորին և թագուհւոյն Պէրլին երթալը: Շվեյտի աշխարհավարութիւնը Գերմանիոյ աշխարհավարութեան ընկերակցելով, եւ ինք կայսերաց մէջ հաստատուել աշխարհավարութիւնը կ'աւարտուի:

Պէրլին 29 մայիս.

Այսօր 12000 զօրաց հանդէս մ'եղաւ ի պատիւ Շվեյտի թագաւորին:

Փարիզ 29 մայիս.

Ազգային ժողովն առաջին ընթերցումով ընդունեց լիտի ընկերութեան երկաթուղւոյ նոր գիծեր շինելու արտօնութեան ծրագիրը: Պ. Պիլիքէ և Պ. Տիւֆօր՝ Սահմանադրական յանձնաժողովին մէջ յայտարարեցին թէ հասարակային իշխանութեանց վերաբերեալ օրինաց մէջ էական փոփոխութիւն չեն ընդունելու:

Պոլսոյ նաւապետն յաջողեցաւ իւր նորահար զգեստին և գործիքին միջոցաւ Մանչի նեղուցն անցնիլ՝ Բալէէն ի Տուււլը:

Վիէննա 30 մայիս.

Դանուբի նոր գետուղին այսօր նաւարկութեան բացուեցաւ: Սեծ հանդիսիւ ի ներկայութեան կայսեր, իւր ընտանեաց, նախարարաց և բարձրաստիճան պաշտօնէից:

Կայսրը քիչ օրէն իշխ պիտի երթայ:

Պէրլին 30 մայիս.

Շվեյտի Օսթար թագաւորը Ռուսիոյ կայսեր այցելութեան պիտի երթայ և նորէն Պէրլին պիտի վերադառնայ ներկայ խաղաղական աշխարհավարութիւնն հաստատելու:

Դոնտրա 31 մայիս.

Ուս. Բոնա. 43 11/16
Փոխ. 1865 69
1869 54 3/4
1874 65 1/8
1872 86 3/8
1873 53

Նոր փոխառութիւն —

Անշու Բոնա. 94 3/16

Իւլիբրուլ 31 մայիս.

Բաւալակ Միտլինկ—Օրլէան 8

Փարս Զօլթրաւ 5 1/8

Ծախում 10000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ

Երուսաղէմայ նախորդ կառավարիչ Բեամիլ փաշան Բիտի կառավարիչ անուանեցաւ:

Բարձր. Արարհամ փաշան անց

Եւալ հինգշաբթի օրը դաշտային կուսակցութիւնը տուաւ իւր Պէյքօղի պարտիզին մէջ՝ Գերմանիոյ և Աւստրիոյ դեսպանաց և դեսպանութեանց Պարոն Հիլը և ընտանիքը, Պ. Բօլէք և ընտանիքն և Պ. Սալմ կոմսն ալ ներկայ էին այս կոչուէքին:

Բարձր. Արարհամ փաշան՝ խորհրդին անձնական շոգենականներէն մին իւր բարձրաստիճան հիւրերուն տըրամադրութեան ներքեւ դրած էր:

Անցեալ շաբթու թարապիտի ծովերէն վրայ Անգլիոյ դեսպանին վերայ յարձակող զինով զինուորն հինգ տարի շղթայակալ աշխատութեան գատապարտեցաւ: Միանգամայն Բ. Գուռն այս դէպքին վրայ ցաւ յայտնեց դեսպանին:

Նախորդ Մեծ-Եպարքոս և այժմ իշխիլի կուսակալ Բարձր. Հիւսէյին Աֆէի փաշան ստամբուլի հիւանդութեան ներդուելով գեղը քաշուեր և հոն անկախի կը ծառայէ: Իւր անձնական բժիշկ Տօքթօր Սէրփիլէն էֆէնտին հեռագրով իշխիլ կանչուելով, անցեալ շաբթու հոն գնաց, և շաբթու առաւօտ մայրաքաղաքս վերադառնալով իւր բերան թէ հիւանդութիւնն ապաքինելու վրայ է:

Իշխիլէն դուռն անմիջապէս կրէ թէ Նորին Բարձրութիւնը Միտլինկի կղզւոյն մէջ հոյեր կը գնէ պարտէզ մ'իւ մամարանոց մը շինելու համար:

Միւլիթէֆիլի կոչուած արաքացի ցեղին գլուխ Նախիլ փաշան Վէհ. Սուլթանին հրամանաւ և Պոլիս հասաւ յատուկ շոգենաւով, և Գուրուչէյմէ Վէլի փաշային սպարանքն իջաւ:

Յիշեալ փաշան քառասուն հատ արաքացի ընտիր նոյն դընայ բերած է Վէհ. Սուլթանին:

ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅՈՒՆ

ԵՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻՆ

19 մայիս. Երկուշաբթի իրիկուն 48 38

20 մայիս. Երեքշաբթի առաւօտ 49 10

Կէս օր 49 7

Կ. Պոլիս 19 մայիս

Սօսիթի Ժէնէրալի բաժնէն Անգլիկ. 8 5

« Փոխանակութեան » 5 38

Կ. Պոլսոյ Պանքային » 6 12

Բրէտի Ժէնէրալ » 10 25

Բրէտի Սփրօ—Թիւրք 3րդ 128 1/8

Երկաթուղեաց 3րդ 363

Փոխ. 1863 » 364

» 1865 » 364

» 1869 » 284 1/2

» 1872 » 88 1/4

» 1873 » 272 1/2

Թրամուլ 3 40

ԲՆԵՐԱՅՔ ԿՐԱՄՈՑ

19 ՄԱՅԻՍ

Անգլ. Լիւր 110 38

Նաթօլէոն ուկի » 88 40

Իմպերալ Ռուս » 89 46

Գլըրի » 54 26

Չինգ ֆրանք » —

Չինգ ֆրանք » 104 22

Պիլնա » 430 40

Ա. Զ. Գ. Ա. ՅԻՆ

ՀՐԱՒԵՐ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻՆ

Ազգային ժողովը նիստ ունի յաւաքիկայ ուրբաթ մայիս 23, ի Ղաւթիս:

Ատենիս պիտի բացուի ճիշդ ժամ 6ին և Գնդուի 10ին:

Հրաւիրեալ են Նրեսփոխան Էֆէնտինը, իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ:

17 մայիս 1875

Ի Պատրիարքարան Հայոց

Կ. Պոլիս

ՊԱՏՐԱՐԿ Կ. ՊԱՏՐԱՐԿ

ՆԵՐՔԻՆ ԱՐԲԵՊԱՆԱԿՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳ

1. Կազմութիւն Նախաքննիչ Դիւանաց:

Ատենադպիր

Հ. Ս. Աւանակ

Երէկ ձեւորւած արեւի Գեր. Լորտ եպիսկոպոսն անգղիացի Պատ. Տ. Բըրթիս քահանային հետ Պատրիարքարան դարձ անցելու իւր տուաւ Ս. Պատրիարքին և արժանաւայել պատուով ընդունուեցաւ:

Նորին Գերազատութիւնը Գաղղիերէն հասկնալով իայց խօսիլ չլըրնալով անգղիերէն խօսեցաւ: Տ. Բըրթիս ալ գաղղիերէն թարգմանեց, և Ս. Պատրիարքն ալ գաղղիերէն պատասխանեց:

Տեսակցութիւնը կէս ժամէն աւելի տեւեց և խօսակցութեան նիւթ եղաւ բնականաբար Գերմանիոյ մէջ տիրած կրօնական շարժումն, ինչպէս նաեւ Անգլիական, Գերմանական և Յուդական եկեղեցեաց մէջ ունեւորուած կրօնական բանակցութիւնը: Յետոյ խօսքը Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ դառնալով Տ. Բըրթիս յայտարարեց թէ իւր մինչեւ ցարդ ստացած տեղեկութեամբ վերահասու եղած է, թէ Հայաստանեայց եկեղեցւոյն ամեն եկեղեցիներէն աւելի նախնական եկեղեցւոյ ծէսերն ու աւանդութիւնները պահպանած է, և թէ Պօնքաղաքը դուրսուրուելիք ժողովին մէջ, ուր Յունական և Անգլիական եկեղեցեաց աստուածաբաններն ալ պիտի դառնան, Հայոց եկեղեցւոյ դաւանութեան և ծիսից վրայ դրաւոր տեղեկութիւն մը կրնայ մեծ լոյս տալ մ'ունենալ:

Սրաբան Պատրիարքն Հայաստանեայց եկեղեցւոյն ուրիշ քրիստոնէայ եկեղեցեաց նկատմամբ վաղուց ի վեր ունեցած ներող և եղբայրական հոգին բացատրելով զարմանք յայտնեց թէ յանուն քրիստոնէական հին եկեղեցեաց ժողով մը կը գումարի ի Գերմանիա և քրիստոնէական ամենէն հին եկեղեցւոյն, այն է Հայաստանեայց եկեղեցւոյ հրաւեր յըլար այդ ժողովին մասնակցելու:

Ասոր վրայ Լորտ եպիսկոպոսն ալ ցաւ յայտնելով խնդրեց որ ինչպէս Յունական, Լատինական և Անգլիական եկեղեցեաց դաւանութեան և ծիսից վերաբերեալ կէտերը մէկ մէկու հետ բարդատական կերպիւ գրի առնուած են, նոյնպէս և Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան և ծիսից վերաբերեալ նոյն կէտերը գրի առնուելով Պատրիարքարանէն իրեն հաղորդուին: Սրաբարքահաճութիւն տալով առաջարկեց որ երեք եկեղեցեաց դաւանութեան և ծիսից բարդատելի կէտերը նախապէս իրեն հաղորդուին դրով, որպէս զի ինքն ալ Հայոց եկեղեցւոյն յիշեալ կէտերուն նկատմամբ ունեցած վարդապետութիւնն առնութեւր նշանակէ և Տ. Բըրթիս յանձնէ: Տ. Բըրթիս ալ խոստացաւ կատարել Ս. Պատրիարքին առաջարկութիւնը:

Ի վերջոյ Լորտ եպիսկոպոսը շնորհակալութիւն յայտնեց Ս. Պատրիարք հօր ըրած սիրալի ընդունելութեան և Հայաստանեայց եկեղեցւոյ և ազգին նոյնպէս և Ս. Պատրիարք հօր համար բարեմայրութիւններ ըրաւ: Նոյնը ըրաւ փոխադարձաբար Ս. Պատրիարքն ալ Անգլիական մեծ ազգին բարօրութեան և Լորտ եպիսկոպոսին կենաց համար, նոյնպէս նաև ամեն քրիստոնէայ ազգաց իրարու հետ քրիստոնէավայել սիրով և եղբայրութեամբ վարուելուն համար՝ իրեն միևնոյն փրիստոսի հիմնած եկեղեցւոյն և նորա Աւետարանին ճշմարիտ աշակերտներ:

Այս եղբայրական և պատուասիրական տեսակցութեան ետեւ Գեր. Լորտ եպիսկոպոսն և Պատ. Տ. Բըրթիս դոհուցեալ բաժնուեցան Ս. Պատրիարքէն:

Լորտ եպիսկոպոսին մեկնելէն ետեւ մայրաքաղաքին Հիւսիսական նախորդ դեսպան Պ. Սիմօն Պատրիարքարան եկաւ իւր հրաժեշտի ողջոյնը տալու մեր Ս. Պատրիարք հօր, և սիրալի մեծարանք ընդունուեցաւ:

Առ բարեհալ ժողովուրդ Հայոց՝ Յիսուսի փրիստոսի Տեառն մերոյ Համբարձման յաւաքիկայ տօնին, ըզձեզ, ո՛ր բարեպաշտ և աղքատաէր ժողովուրդ Հայոց, կը հրաւիրեմ յԱզգային Հիւանդանոցն, յիշեցնելով որ այս տարի ամեն ժամանակներէ աւելի կարօտ է ձեր օգնողականութեանը, վասն զի հինգ հարիւրէն աւելի հիւանդ, որք, սովեալ անտէրունջ ազգայինը պատապարուած են հոն և իր խնդրեմ և կաղաչեմ որ ի սէր վասն մեր աղքատացեալն Յիսուսի փրիստոսի, բարեհաճեք յայց կենելով միմիկարել ձեր ցանկաւոր, անք և տառապեալ եղբայրներն ու դաւանակներն, որք այս տարի մահաւանդ ձեր կարեկցութեանն ու զուարթած:

[illegible]